

Ճուղուր Երևանցի

# ԹԵ ԻՆՉՈՒ...


ՀԵՔԻԱԹՆԵՐ ՄԵՐ  
ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԱՍԻՆ



Ճուղուր Երևանցի

# ԹԵ ԻՆՉՈՒ...

ՏԵՔԻԱԹՆԵՐ ՄԵՐ  
ՏԻԳԻԵՆԱՅԻ ՄԱՍԻՆ



ԷՆԻԹ ՊՐԻՆՏ  
հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ

# ԹԵ ԻՆՉՈՒ ԸՈՆՔԵՐՆ ՈՒ ԱԶՔԵՐԸ ԲԱՐԵԿԱՍԱՑԱՆ

**Ս**իրելի երեխաներ, մարդու մարմինը կատարյալ է, և նրա վրա չկա ոչ մի ավելորդություն: Ինչ որ ունենք մենք մեր մարմնի վրա, շատ կարևոր է և յուրաքանչյուր օրգան իր դերն է կատարում, որպեսզի հեշտ և հարմարավետ ապրենք: Ա՛յ, պատկերացրեք, եթե աչքեր չունենայինք, ինչպե՞ս պիտի տեսնեինք մեզ շրջապատող աշխարհը, կամ, եթե ականջներ չունենայինք, ինչպե՞ս պիտի լսեինք գեղեցիկ երաժշտություն, խոսեինք իրար հետ: Նույնը կարող ենք ասել մեր քթի, բերանի կամ ձեռքերի ու ոտքերի մասին: Բայց արի ու տես, որ ունենք նաև հոնքեր, որոնք, առաջին հայացքից, հարմարավետ տեղավորվել են մեր աչքերի վերևում և կարծես թե ոչինչ չեն անում: Սակայն եկե՛ք այդպես չմտածենք, քանի որ հոնքերը նույնպես իրենց կարևոր դերն են կատարում, իսկ թե երբվանի՞ց և ինչո՞ւ, դուք կիմանաք, երբ կարդաք այս հեքիաթը:

Շատ տարիներ առաջ, թերևս անհիշելի ժամանակներում, Կարկո անունով մի տղա էր ապրում, որը մաքրասեր չէր և հազվադեպ էր լողանում: Ամեն առավոտ, քնից արթնանալիս, իհարկե, նա անպայման լվանում էր երեսը, որպեսզի թարմանար, բայց, արի ու տես, չէր էլ պատրաստվում լողանալ ու գլուխը մի լավ լվանալ: Դրանից շատ էին դժգոհում տղայի մազերը, որոնք, թվով մոտ 5000 հատ, շատ խիտ տեղավորվել էին Կարկոյի գլխի վրա:

- Սա ի՞նչ խայտառակություն է,- մի օր համբերությունից դուրս եկած՝ խոսեց մազերից մեկը: - Այս փնթի տղան ամեն օր ջա-









նասիրաբար լվանում է երեսը, բայց ամենևին ուշադրություն չի դարձնում իր մազերի հիգիենային, և մենք այսպես էլ անլվա ու փոշոտ ենք մնում:

- Որովհետև այդ տղան չի հասկանում, թե ինչքան կարևոր ենք մենք իր համար,- շարունակեց մյուս մազը: - Եթե մենք չլինենք, նրա գլուխը ձմռանը կմրսի, կամ էլ ճաղատ կլինի ու այդպիսով կամաչի փողոց դուրս գալ: Իսկ այսօր ընդհանրապես ուշադրություն չի դարձնում մեր մաքրության վրա, մնում ենք անլվա, անգամ զլանում է սանրել մեզ:

- Ճիշտն ասած՝ մենք այդ մասին շատ ենք մտածել,- խոսքի բռնվեցին մի խումբ մազեր,- ու որոշել ենք հեռանալ ձեզնից և տեղավորվել Կարկոյի դեմքի վրա:

- Բայց Կարկոն դեռ փոքր է, և նրա դեմքին սազական չէ ունենալ մորուք կամ բեղեր,- զարմացած հակադարձեցին մյուս մազերը:

- Չէ, դուք մեզ լավ չհասկացա՞ք, մենք չենք տեղավորվելու Կարկոյի թշիկների վրա: Մեր ցանկությունն է տեղավորվել տղայի աչքերի վերնամասում և դառնալ հոնքեր,- պատասխանեցին ճամփորդ մազերը:

- Բայց արդյոք աչքերը կհամաձայնեն, որ ապրեք իրենց գլխավերևում՝ որպես մշտական հարևաններ: Միգուցե նյարդայնանան այս ամենից: Չէ՞ որ նրանք ամեն օր լարված աշխատում են և շատ զբաղված են, իսկ դուք կարող եք նրանց խանգարել:

- Միևնույն է, մենք այլևս չենք հանդուրժի այս փնթի վիճակը, մեկնում ենք այստեղից և գնում ենք տեղավորվելու տղայի աչքերի վերևում: Գոնե ամեն օր դեմքը լվանալիս մենք էլ կմաքրվենք և չենք ապրի այսպիսի փնթի միջավայրում, ինչպես հիմա ենք ապրում: Մի ձեր շնորհը նայեք, անլվա վիճակից յուղակալել ենք, ու որքան անհարկի միկրոբներ են ցանկանում ապրել մեզ հետ՝ օգտվելով այս հակահիգիենիկ վիճակից: Չէ, այլևս անհնար է նման պայմաններում ապրելը, մենք հեռանում ենք ձեզնից և իջնում ենք ներքև՝ աչքերի մոտ:

Այդպես էլ եղավ, ապստամբ մազերը լքեցին Կարկոյի գլխամաշկը և գնացին ու տեղավորվեցին տղայի ճակատին՝ աչքերի վերնամասում: Այս ամենը տեսնելուց հետո աչքերը բողոքեցին:



- Այս ի՛նչ անկոչ հյուրեր են,- տագնապահար բացականչեցին Կարկոյի աչքերը: - Դուք ի՛նչ գործ ունեք այստեղ, մեր գլխավերևում:

- Մի՛ մտահոգվեք, սիրելի աչքեր: Մենք օգտակար գործով ենք այստեղ: Եկել ենք ձեզ պաշտպանելու քրտնքից ու անձրևից: Այ՛, երբ Կարկոն վազում ու քրտնում է, կարո՞ղ եք ասել, թե ո՞ր է հոսում ճակատին առաջացած քրտինքը:

- Օ՛հ, այդ մասին մեզ մի հիշեցրեք, քանի որ շատ տհաճ է մեզ համար: Դե, իհարկե, այդ քրտինքը գալիս ու, անկոչ հյուրի պես, լցվում է մեր մեջ,- սրտնեղած պատասխանեցին աչքերը,- ու երբեմն այն շատ աղի է ու տհաճ, անգամ մրմուռ է առաջացնում ու ցավեցնում մեզ:



- Ա՛յ, եթե դուք թույլ տաք, որ մենք բնակվենք ձեր գլխավերևում, ապա թույլ չենք տա, որ Կարկոյի քրտինքը հասնի ձեզ, և այն կհավաքենք մեզ վրա: Նույնկերպ կվարվենք անձրևի կաթիլների հետ, երբ տղան որոշի զբոսնել անձրևի տակ:

Լսելով այս ամենը, աչքերը համաձայնեցին, որ իրենց գլխավերևում հոնքեր տեղավորվեն, ու մինչև այսօր էլ նրանց հետ ապրում են որպես հաշտ ու խաղաղ հարևաններ: Իսկ Կարկոն, տեսնելով այս ամենը, ամաչեց իր փնթիությունից, սկսեց հաճախ լողանալ, լվանալ ու սանրել մազերը:

Դե, իսկ հոնքերը, այս ամենից ոգևորված, սկսեցին նաև դեմքի վրա արտացոլել մարդու տրամադրությունը, ջղայնության դեպքում կիտվելով, իսկ զարմանք արտահայտելիս՝ վեր թռչելով: Այնպես որ, սիրելի՛ երեխաներ, հոնքերն էլ անգործ չեն: Նրանք մինչև այսօր էլ մի կողմից պաշտպանում են մարդու աչքերը, մյուս կողմից ցուցադրում են մարդու զգացմունքները:

Ասեմ ավելին, հոնքերը երկու անգամ ավելի դանդաղ են աճում, քան գլխի մազերը: Ու դրա համար էլ, երբ մարդիկ ճաղատանում են, միևնույն է, իրենց հոնքերը պահպանում են՝ որպես կարևոր գործ կատարողների: Ու պատահական չէ, որ շատ երկրներում հոնքերը դարձան նաև պաշտամունք: Օրինակ՝ Հին Չինաստանի տղամարդիկ փորձում էին հաստացնել իրենց հոնքերը՝ համոզված լինելով, որ դա հաջողություն կրերի, իսկ ամենագեղեցիկ կանայք ձգտում էին ունենալ իրար կպած հոնքեր:







# ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՏԱՄԻ ՓԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՏԱՄՆԵՐԻՆ

**Ռ**ուք երևի լավ եք հիշում, թե ինչպես ընկան ձեր կաթնատամները, և դրանց տեղը աճեցին մշտական ու առողջ ատամներ, որոնք ձեզ հետ կլինեն առհավետ: Երևի թե հիշում եք նաև, որ ձեր ընկնող կաթնատամները գալիս և տանում էր Ատամի փերին, որն այնքան բարի էր, որ փոխարենը ձեզ մի նվեր էր թողնում՝ մետաղադրամ կամ խաղալիք: Բայց, ափսոս, դուք նրան չէիք տեսնում, որովհետև փերին գալիս էր այն ժամանակ, երբ քնած էիք լինում՝ բարձի տակ թողնելով ընկած կաթնատամը: Դե, իհարկե, բարի փերին այցելում էր, վերցնում էր այն և տանում իր հետ, որպեսզի ձեզ փոխարենը ամուր և առողջ ատամներ վերադարձներ: Իսկ թե ինչո՞ւ էր Ատամի փերին անպայման այցելում կաթնատամը կորցրած երեխաներին, հիմա կիմանաք՝ լսելով այս հեքիաթը:

Մարդիկ միշտ էլ զգացել են իրենց ատամների կարևորությունը: Չէ՞ որ ատամների օգնությամբ նրանք մանրացնում են կարծր սնունդը, փափկեցնում այն, որպեսզի հեշտ մարսեն: Մարդկանց ատամները երեսուներկու համերաշխ և միմյանց օգնող եղբայրներ են: Այ, օրինակ, սեղանատամները, որոնք ամենաուժեղն են, ծամելով մանրացնում են կոշտ սնունդը: Կտրիչ ատամները պոկում և առանձնացնում են սննդի մեծ կտորների մասեր՝ դրանք





փոխանցելով սեղանատամներին: Դե, իհարկե, այդ ընդհանուր գործին մասնակցում են նաև ժանիքները, որոնք ձեռքում են կարծր սնունդը:



Եվ թվում էր, թե համերաշխ ատամ եղբայրներին ոչ ոք չէր կարող հաղթել և անգամ խանգարել, որովհետև միշտ միասին էին և իրար փոխօգնության էին գալիս դժվար պահերին: Բայց, արի ու տես, օրերից մի օր նրանք մի ընդհանուր թշնամի ունեցան՝ վնասարար մանրէներին: Այդ անպիտան մանրէները այնքան փոքր էին, որ սննդի հետ աննկատ հայտնվում էին մարդու բերանում ու գիշերները հանդգնորեն սկսում էին հարձակվել առողջ ատամների վրա՝ փորձելով քայքայել նրանց:

Դե, իհարկե, երեսուներկու եղբայրները չէին կարող հանդուրժել այս ամենը և պատերազմի մեջ մտան մանրէների հետ, բայց, ավանդ, չէին կարողանում դրանց հաղթել: Ա՛խր, այդ անպիտան վնասարարները այնքան շատ էին, որ ատամ եղբայրները չգիտեին, թե որին բռնեին ու պատժեին: Պատլիկ մանրէները անընդհատ թաքնվում էին ատամնաշարի խորքերում, լնդերի տակ ու աննկատելի էին դառնում: Իսկ երբ գիշերը ատամնաշարը քնով էր անցնում, տարբեր կողմերից մեծ բանակով հարձակվում էին ատամների վրա, սև անցքեր առաջացնում, քայքայում ու ցավեցնում էին ամեն մի ատամը՝ մնալով անպատիժ:

– Որքան կարելի է հանդուրժել այս ամենը, – մի օր արտահայտվեց կտրիչ ատամը: – Պետք է անհապաղ մի բան ձեռնարկել, գտնել այս անպիտան մանրէներին հաղթելու ելքը: Որքան էլ որ իմ կտրիչ եղբայրներով փորձում ենք կռվել՝ վնասակար անկոչ հյուրերի դեմ, միևնույն է, մանրէներն են մեզ հաղթում: Ի՛նչ կասեք, սիրելի եղբայրներ, ո՞րն է ելքը:

– Ելք կա՛, – հանգիստ պատասխանեց իմաստության ատամը, – պետք է դիմել Ատամի փերիին, նա շատ բարի է և հաստատ կօգնի մեզ: Եկեք բոլորս միասին կանչենք փերիին, թող գա ու մի ձար անի:

Այդպես էլ վարվեցին: Ատամի փերին այցելեց երեսուներկու եղբայրներին և իր քնքուշ ձայնով խոսեց.





- Գիտե՛մ, թե ինչու եք ինձ կանչել: Իրոք, այդ անպիտան մանրէները, որ հայտնվում են մարդու բերանում, շատ վնասարար են, հատկապես առողջ ատամների համար: Ու որպեսզի նրանց հաղթենք, ես մի հիանալի բան եմ մտածել:

- Իսկ ի՞նչ եք մտածել,- ոգևորված հետաքրքրվեցին երեսուներկու ատամ եղբայրները:

- Այսուհետ, երբ կընկնեն երեխաների կաթնատամները, ես կայցելեմ նրանց, կվերցնեմ այդ ոչ պիտանի ատամները, կտանեմ իմ պալատ, այնտեղ ամուր էմալով կպատեմ յուրաքանչյուրին և ետ կվերադարձնեմ՝ որպես մշտական ատամ:

- Ուռն, դրանից հետո արդեն անպիտան մանրէները այլև չեն կարող ձեղքել էմալապատ շերտը և վնասել մեզ,- ուրախությամբ արձագանքեցին ատամները:

- Չէ, դա այդքան էլ այդպես չէ,- հակադարձեց բարի փերին: - Ճիշտ է, ես ամեն ինչ կանեմ, որ ատամները ամուր էմալապատվեն, բայց դա գործին ամբողջապես չի օգնի, եթե երեխաները չպահպանեն ատամների հիգիենան:

- Իսկ ի՞նչ բան է հիգիենան,- զարմացած հարցրին ատամները:

- Ամեն օր երեխաները պարտավոր են հատուկ մածուկով և խոզանակով մաքրել իրենց ատամները, որպեսզի դրանով ոչնչացնեն վնասարար մանրէներին: Միննույն է, որքան էլ որ ամուր լինի իմ էմալապատումը, այնքան ուժեղ կարող են լինել մանրէները, որոնք կփորձեն հանդգնորեն հարձակվել էմալի շերտի վրա և փչացնել այն:

- Ուրեմն ստացվում է այնպես, որ եթե երեխաները չպահպանեն ատամի հիգիենան, խոզանակով ու մածուկով ամեն օր չմաքրեն իրենց ատամները, ապա մենք դատապարտված կլինենք վաղաժամ կործանման – հոգոց հանելով արտահայտվեցին ատամները:

- Այդպես էլ կա: Բայց մի՛ վիհատվեք, դեռ մանուկ հասակից բոլորն էլ հասկանում են, որ պետք է հետևեն ատամների հիգիենային: Ասեմ, որ ինքս էլ կայցելեմ լոգասենյակներ ու կհետևեմ, թե երեխաներն արդյոք օգտագործում են ատամի խոզանակներ:



Ու եթե հանկարծ նկատեմ, որ երեխան չի օգտագործում ատամի խոզանակ, այնպես կանեմ, որ նրա ատամը ցավի և դիմի ատամնաբույժին: Իսկ դուք հո լավ գիտեք, որ երեխաները չեն սիրում ատամնաբույժին այցելել:

Ու այդ օրվանից սկսած մինչև մեր օրերը, Ատամի փերին պարտադիր այցելում է կաթնատամը կորցրած բոլոր երեխաներին, վերցնում է բարձի տակ պահված ոչ պիտանի ատամը, տանում է իր պալատ, էմալապատում և ետ է վերադարձնում որպես մշտական ատամ: Իսկ դրանից հետո, երբ երեխաները չեն օգտագործում խոզանակներ, փերին նրանց անպայման պատժում է ատամնացավով: Չէ՞ որ չպահպանելով ատամների հիգիենան, նրանք պարզապես ջուրն են գցում բարի փերիի ամբողջ աշխատանքը: Այնպես որ, սիրելի երեխաներ, հետևե՛ք ձեր ատամների մաքրությանը և ամեն օր օգտագործե՛ք ատամի խոզանակը, որպեսզի նվերներ ստանաք Ատամի փերիից, և ոչ թե պատժվեք նրա կողմից:







# ԹԵ ԻՆՉՈՒ ԱՐԵՉԱԿԸ ԱՐԳԵԼԵՑ ԻՐԵՆ ԵՐԿԱՐ ԴԻՏԵԼ

**Ա**մեն անգամ, հեռախոսից կամ համակարգչային սարքերից օգտվելիս, դիտողություն ենք ստանում մեծերից, թե՛ «հերիք է աչքերդ փչացնես, վերջապես հետևիր աչքերիդ հիգիենային»: Միրելի՛ երեխաներ, միգուցե ձեզ անհասկանալի թվա մեծերի մտահոգությունը, բայց եկեք ունկնդրեք իմ հեքիաթը և ամեն ինչ կհասկանաք:

Մի գողտրիկ գյուղում ապրում էր վեց տարեկան մի տղա, անունը՝ Բիբոս: Նա շատ էր սիրում գյուղական գեղեցիկ տեսարանները, մանավանդ, երբ անտառի եզրին ծվարած իրենց տնակի պատուհանից դիմավորում էր առավոտը՝ շողշողացող արևի ճառագայթներից զարթնող դաշտային ծաղիկներով, կանաչ մարգագետիններով, որտեղ եղյամի կաթիլները կարծես շաղ տված փայլփլուն մարգարիտներ լինեին:

Ամեն առավոտ Բիբոսը մտորում էր, թե ինչ երջանիկ է, որ տեսնում է այս գեղեցկությունը և իր աչքերով վայելում հայրենի բնաշխարհի շքեղությունը:

«Իսկ ի՞նչ կլինեք, եթե չունենայի աչքեր, – խորհում էր Բիբոսը ամեն առավոտ, – ուրեմն չէի տեսնելու իմ շրջապատը, չէի հասկանալու, թե ինչ է կատարվում շուրջս»: Այս հարցադրումներով տղան հաճախ էր նայում արևին, որ նրանից պատասխան ստանար: Բայց արևը նրան չէր պատասխանում, այլ փոխարենը՝ թեթև այրում էր տղայի աչքերը՝ ստիպելով դեմքը շրջել երկնքից:

Այս ամենից զայրանում էր Բիբոսը, քանի որ չէր կարողանում



ինչպես հարկն է նայել արևին, որի ճառագայթները աչքերը ցավեցնում էին: Չէ՞ որ արեգակն էլ իր գեղեցկությունն ուներ, ու միայն մայրամուտին էր թույլ տալիս իրեն դիտել ու զմայլվել: Եվ երբ նկատում էր, որ Բիբոսը փորձում էր աչքերով հետևել իրեն, կարծես ամոթից փոքր-ինչ կարմրում և ավելի գեղեցիկ տեսք էր ստանում:


Ու մի օր էլ, երբ տղան հերթական անգամ փորձում էր նորից խոսքի բռնվել արևի հետ, վերջապես նրանից ստացավ հետևյալ պատասխանը.


– Ինձ չի՛ կարելի երկար նայել, տղան: Դրանով դու անզգուշորեն կմարես քո աչքերի լույսը և կկուրանաս:

– Այդ ինչպե՞ս, ինչո՞ւ պիտի կուրանամ – հետաքրքրվեց տղան արեգակից:

– Դե, առավոտյան և կեսօրվա ժամերին իմ ճառագայթները շատ ուժեղ են, ու ես այնպես եմ անում, որ դրանով ջերմություն պարզևեմ երկրին: Եվ եթե դու փորձում ես երկար նայել ինձ, ապա իմ հզոր ճառագայթները մտնելով աչքերիդ մեջ, վնասում են քո տեսողությունը: Ինչ է, չգիտե՞ս, որ աչքը շատ նուրբ է, այնքան նուրբ, որ նրան պահպանում են մարդու հոնքերը, թարթիչները, կոպերը: Գիտե՞ս, թե քանի անգամ են օրվա մեջ կոպերը թարթում, որպեսզի հանգստացնեն աշխատասեր աչքին, որն իր ողջ կյանքի ընթացքում հասցնում է «տեսանկարել» շուրջ 24 միլիոն տարբեր պատկերներ: Միայն ասեմ, որ մեկ վայրկյանում մարդը կարող է աչքերը թարթել հինգ անգամ՝ թույլ չտալով նրանց գերհոգնել: Իսկ թե ինչպե՞ս են թարթիչները հոգ տանում, որ հանկարծ աչքի մեջ մանրէներ չմտնեն ու նրան չվնասեն, ուղղակի անհավանական է: Թարթիչները այնպես փութաջանորեն են պայքարում աչքի առողջության համար, որ դրանցից յուրաքանչյուրը, ի վերջո գերհոգնում և ապրում է ընդամենը հինգ ամիս: Իսկ դու անմիտ ձևով փորձում ես անխնա օգտագործել աչքերդ՝ հայացքդ ուղղելով արևի կիզիչ ճառագայթներին և վտանգելով քո տեսողությունը:

Լսելով արեգակի հորդորները, Բիբոսը այդ օրվանից այլևս չփորձեց աչքերով հետևել արեգակին: Իհարկե, ժամանակ առ ժամանակ, երբ չէր դիմանում ու ցանկանում էր վայելել կիզիչ





արևի գեղեցկությունը, մուգ գույնի ակնոցներով էր դա անում, որպեսզի չվնասեր աչքերը և դրանք պահպաներ ճառագայթումից: Իսկ երբ հիանում էր գյուղական բնաշխարհով, հանում էր ակնոցը և ժամերով դիտում բնության հրաշքները: Դե, ինքն էլ գիտեր, որ անտառի կանաչ գույնը, մարգագետինների գեղեցկությունը ուղղակի օգտակար էին աչքերի համար, քանի որ այդ դիտարժան նրբագեղությունը տեսողական լարվածություն չէր առաջացնում:

Դուք էլ, երեխաներ, հետևեք Բիբոսի օրինակին և ապահովե՛ք ձեր աչքերի հիգիենան: Լավ իմացեք, որ ժամերով հեռախոսից կամ համակարգչից օգտվելը անխնա լարում է ձեր աչքերը և վնաս հասցնում տեսողությանը: Չէ՞ որ այդ սարքերից արձակած լույսը նմանվում է արևի ճառագայթներին, որից պետք է խելամտորեն պաշտպանվել:

Ահա թե ինչու խորհուրդ է տրվում համակարգչային սարքերից օգտվելիս ժամանակ առ ժամանակ դադար տալ, հանգստանալ ու թուլացնել աչքերի լարվածությունը, որ դրանք չվնասվեն և առիավետ ծառայեն ձեզ:










# ԹԵ ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Է ՁԵՌՔԵՐԸ ՀԱՃԱՆԻ ԼՎԱՆԱԼ

**Ե**րևի նկատած կլինեք, որ մարդիկ ուտելուց առաջ կամ դրսից տուն մտնելիս անպայման լվացվում են: Չկարծե՛ք, թե դա ընդամենը սովորույթ է, որ գալիս է դարերի խորքից: Պիտի ասեմ, որ լվացվելը պարտադիր է բոլորիս համար և անհրաժեշտություն է, և ոչ թե սովորություն: Իսկ թե ինչո՞ւ այն դարձավ անհրաժեշտություն, կիմանա՞ք, երբ կարդաք այս հեքիաթը:

Մեր ձեռքերի հինգ մատները միշտ էլ համերաշխ ապրել են կողք կողքի: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր անունը և իր գործը: Այ, օրինակ, բութ մատը եթե վերև է ցույց տալիս, ապա դա գոհունակության նշան է, իսկ ցուցամատը ուղղակի ցուցադրում է նշանակետը կամ նշված ուղղությունը: Միջնամատը, որն ամենաուժեղն է ու երկարուկը, օգնության է հասնում, երբ մատները ինչ-որ ծանր բեռ են բարձրացնում: Իսկ մատնեմատը բնավ չի էլ փորձում խառնվել այդ ամենին, շատ փառասեր է և միշտ ցանկանում է մատանի կրել ու թիթիզանալ դրանով: Դե, իսկ ձկույթը, որն ամենափոքրիկն է և հանգիստ տեղավորված վերջին անկյունում, իրեն պահում է երեխայի պես ու չի էլ փորձում ակտիվ մասնակցել մատների աշխատանքին:

Տարիներ շարունակ կարծես բոլորը հաշտվել էին այս վիճակի հետ և հանդուրժում էին այս ամենը, մինչև չարամիտ բակտերիաների հայտնվելը: Դրանք վնասակար մանրէներ էին, որոնք ամեն կերպ ցանկանում էին սողոսկել մարդու օրգանիզմ և զանազան հիվանդություններ առաջացնել: Բայց արի ու տես, որ





մարդու օրգանիզմ թափանցելը այնքան էլ հեշտ չէր, քանի որ քիթը, բերանը, տեսնելով օդում թափառող բակտերիաներին, անմիջապես փակում էին իրենց մուտքերը՝ թույլ չտալով այդ վնասատուներին սողոսկել մարդու մեջ:

Եվ, ահա, այդ չարամիտ բակտերիաները որոշեցին խարդախ ճանապարհով հասնել իրենց նպատակին և դիմեցին միամտված ձեռքի մատներին՝ փորձելով խաբել ու շողոքորթել նրանց:

– Մենք կարծում ենք, որ արդար չեն վարվում ձեզ հետ: Այ, երբ անհրաժեշտ է տաք բաժակը բռնել, ձեզ են ուղարկում այդ գործին և այրուկներ առաջացնում մատների վրա: Երբ պետք է ծանր աշխատանք անել, դարձյալ ձեզ են գործի դնում, և դրանից կոշտուկներ են գոյանում ձեզ վրա:

– Իհարկե, մենք դա շատ լավ գիտենք,– պատասխանեցին միամիտ մատները,– բայց ի՞նչ կարող ենք անել, այդպես է կարգը, միշտ էլ ծանր աշխատանքներ ենք կատարելու, որ օգնենք մարդուն:

– Իսկ մենք կառաջարկենք ձեզ հրաժարվել այդ ամենից, պարապ–սարապ մնալ ու այլևս անդուր գործեր չանել,– խորամանկեցին բակտերիաները:

– Եվ ինչպե՞ս էք պատկերացնում մեր անգործությունը: Ա՛խր, առանց մեզ մարդը չի կարող նորմալ ապրել՝ սնվել, նկարել, նվագել ու լիքը–լիքը նման բաներ,– հաստատակամորեն պնդեցին ձեռքի մատները:

– Ա՛յ, եթե դուք թույլ տա՞ք, որ մենք ապրենք ձեզ հետ միասին, դրանով դուք կընդունեք վնասակար մանրէներ, կթուլանաք, և, ձեր հիվանդ տեսքը նկատելուն պես, մարդիկ ձեզ կխնայեն ու այլևս ծանր գործերի չեն դնի,– համոզեցին բակտերիաները մատներին:

– Իսկ մեզ մոտ որտե՞ղ պետք է ապրեք – հետքքրքրվեցին մատները:

– Մենք այդ մասին արդեն մտածել ենք, պարզապես հանգիստ կտեղավորվենք ձեր եղունգների տակ, այնտեղ մեզ համար բնակարան կկառուցենք:



Միամիտ մատները, մտքի ծայրով չանցկացնելով, որ իրենց խաբում են, համաձայնեցին և թույլ տվեցին չարամիտ բակտերիաներին ապրել եղունգների տակ: Նրանք գաղափար անգամ չունեին, թե ինչ են ծրագրել այդ չարագործները:



Բանն այն էր, որ բակտերիաները լավ գիտեին, թե մարդիկ օրը քանի-քանի անգամ իրենց մատներով հպվում էին քթին, բերանին, աչքերին: Ու եթե նրանց հաջողվեր բնակվել եղունգների արանքում, ապա այդ հպումների ընթացքում կարող էին մատների միջոցով քթանցքից, բերանի խոռոչից և աչքերից հեշտությամբ թափանցել մարդու մարմնի մեջ և տարբեր հիվանդություններ առաջացնել: Դե, ո՞վ չգիտեր, որ չարագործ բակտերիաները, որոնք անտեսանելի էին, և դրանց կարելի էր տեսնել միայն մանրադիտակով, հազարների էին հասնում և գերագույն հաճույք էին ստանում հատկապես այն ժամանակ, երբ մարդիկ հիվանդանում էին: Դժբախտաբար, այդ մասին բոլորը գիտեին, բացի մատներից, որոնք միամտորեն թույլ տվեցին բակտերիաներին բնակվել իրենց եղունգների տակ:

Անցան օրեր, դավադիր բակտերիաները մատների օգնությամբ սողոսկեցին մարդկանց օրգանիզմները և սկսեցին ծանր հիվանդություններ պատճառել: Բոլորը անհանգստացան, հատկապես ուղեղը, որը կարգավորում ու վերահսկում էր մարդու օրգանիզմի աշխատանքը:

- Չեմ հասկանում, որտեղից են բակտերիաները սողոսկում մարդու մեջ,- զայրությամբ դիմեց ուղեղը մարդու բերանին, քթին ու աչքերին:

- Մենք մեղավոր չենք,- մտահոգված պատասխանեցին նրանք,- ամեն ինչ անում ենք, որ բակտերիաները ներս չսողոսկեն, բայց այդ անպիտան մատները, շփվելով մեզ հետ, օգնում են այդ չարագործներին՝ մտնելու մարդու օրգանիզմ:

- Իսկ դուք, դանդաղեցե՛ք մատներ, որ երկար ժամանակ հիվանդ եք ձևանում ու տկարացած, ոչինչ չեք ուզում անել, ի՞նչ կասեք սրան,- հունից ելնելով ու ջղային տոնով ուղեղը դիմեց մատներին:







- Մենք միայն այն կասենք, որ դուք անարդարացի՝ եք վարվում մեզ հետ: Ինչքան կեղտոտ գործ կա, մեզ եք հանձնարարում՝ աղբը թափել, փոշին մաքրել, տունը ավլել, ցեխը հեռացնել ու էլի շատ կեղտակոլով աշխատանքներ: Այսուհետ ուզում ենք, որ նաև հաճելի ու մաքուր գործեր անենք,- բողոքեցին մատները ուղեղին:

- Շատ լավ, այսօրվանից ես ձեզ կհանձնարարեմ նաև հաճելի գործեր, որ ձեզ լավ զգաք, տեսնեմ հետո՞ ինչ կասեք:

- Իսկ դրանք ի՞նչ հաճելի գործեր են,- հետաքրքրվեցին մատները:

- Այսուհետ ձեզ կհանձնարարեմ կատարել շոշափող զգայարանի դեր, ու դուք, հավելյով զանազան իրերի, մարդկանց կպատմեք դրանց ձևի, ջերմաստիճանի մասին: Բացի այդ, ձեզ կտվորեցնեմ, թե ինչպես կարելի է միայն մատների շարժումներով, համր ձևով խոսել մարդկանց հետ, երբ նրանք չեն կարողանում բարձրաձայն արտահայտվել: Բայց այդ ամենը դուք կկարողանաք անել միայն այն ժամանակ, երբ ձեր եղունգների տակից վոնդեք վնասատու բակտերիաներին:


- Անկեղծ ասած, մենք չգիտենք, թե դա ինչպես պետք է արվի: Ա՛խր. այդ բակտերիաները այնքան աներես են, որքան էլ որ վոնդում ես, մեկ է, որոշ ժամանակ անց հարյուրներով ու հազարներով գալիս ու հարմարավետ տեղավորվում են մեր եղունգների տակ,- արդարացան մատները:

- Դրանց դեմ պայքարելու ամենալավ միջոցը հաճախակի լվացվելն է: Հենց տեսնո՞ւմ եք, որ անպիտան բակտերիաները մոտենում են ձեզ, իսկույն վերցրեք օձառը և հոսող ջրի տակ մի լավ լողացեք: Օձառի կծու պղպջակներից բակտերիաները շատ են վախենում և իսկույն կփախչեն: Եվ հետո, մի՛ թույլ տվեք, որ ձեր եղունգները շատ երկարեն: Դրանք կտրեք ու կարճացրեք ժամանակին, որ բակտերիաների համար չդառնան հարմարավետ բնակատեղիներ, - խորհուրդ տվեց ուղեղը մատներին:

Դե, մատներն էլ հետևեցին ուղեղի խորհրդին և սկսեցին օրը մի քանի անգամ օձառով լվացվել: Տեսնելով այս ամենը և չկա-

րողանալով տանել կծու օձառի հոտն ու համը, բակտերիաները ստիպված փախուստի դիմեցին և հեռացան:

Ու պետք է ասեն, որ մարդիկ այնքան սիրեցին ու վստահեցին մաքուր մատներին, որ նրանց սկսեցին հաճելի հանձնարարություններ տալ: Այ, եթե դուք հետևեք ջրասուզակներին, ապա կտեսնեք, որ ջրի տակ նրանք խոսում են մատների շարժումներով: Եթե բութ մատը միացնում են ցուցամատին և օղակ են պատկերում, դա նշանակում է, որ ամեն ինչ նորմալ է: Իսկ եթե բութ մատը վերև են պարզում, ապա դիմացինին հայտնում են, որ բարձրանալու պահն է: Եվ, վերջապես, երբ ջրի տակ վտանգ են տեսնում, ապա դիմացի սուզորդին այդ մասին հայտնում են բոլոր մատներով բռունցք սարքած շարժումով:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թե ինչու հոնքերն ու աչքերը բարեկամացան.....	2
Թե ինչպես Ատամի փերին պաշտպանեց երեսուներկու աստամներին .....	9
Թե ինչու արեգակը արգելեց իրեն երկար դիտել.....	17
Թե ինչու պետք է ձեռքերը հաճախ լվանալ .....	22